ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР. БИОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ АРМЕНИИ

т. XXIV, № 1, 1971

ՀԱՄԱՌՈՏ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Ռ. Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՃԱՐԵՆՈՒ ԾԱՌՈՒՏՆԵՐԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հայաստանում անտառ կազմող հիմնական ծառատեսակներ են համարվում հաճարենին (32%), կաղնին (35%) և բոխին (18%)։ Անտառային տարածության մնացած մասը զբաղեցնում են՝ դաժին, գիհին, սոճին, հացենին, թեղին, թղկին, լորենին և ուրիշներ։ Այդ ծառատեսակների տարիքային կառուցվածքը մինչ այժմ դեռ չի ուսումնասիրված։ Մի քանի աշխատություններում [3, 6, 7, 8, 9] բերվում են որոշ տեղեկություններ հաճարկուտների կառուցվածքի և նրանց հասակային աճի մասին։ Տվյալ հարցի ուսումնասիրումն ու պարզաբանումը կարևոր է անտառի բնական վերաճի, անտառահատման եղանակի ընտրելու, ինչպես և անտառանյութից օգտվելու չափը ճիշտ որոշելու համար։

Մեթոդական ցուցումներով [1, 5] կատարված 680 ծառաբների ուսումնասիրություններից պարզվել է, որ Հայկական լեռնաշխարհի հաճարկուտները ամբողջապես տարահասակ են և բազմահարկ, ունեն տարիքային՝ առաջին հասակային դասից մինչև 400 տարեկան, և ծառաբների տրամագծի՝ մի քանի սանտիմետրից մինչև 1,5 մ. լայն տատանում։ Տարիքային այսպիսի կառուցվածքի պայմաններում, հիմք ընդունելով տվյալ սերնդի կենսաբանական յուրահատկություններն ու առանձին ծառերի վիճակը, ինչպես նաև ըստ տարիքի ու տրամագծի ծառաբների բաշխվածության բնույթը, անհրաժեշտություն է զգացվում հաճարկուտները մասնատել երեք համատար հասակային խմբերի, այսինքն՝ սերունդների։ Առաջին սերնդին համապատասխանում են գերհասունացած և առավել հաստաբուն ծառերը, երկրորդին՝ ծառուտների հասունացած և երրորդին՝ հասունացող մասը։ Հաճարկուտներում ակնհայտ է 200-ից ավելի տարիք ունեցող ծառաբների քանակի խիստ նվազում և ինտենսիվ ոչնչացում, որն ինքնըստինքյան ցույց է տալիս նրանց բնական հասունացման տարիքը։ Այդ հիմնավորվում է նաև 220-ից ավելի տարիքի ծառաբների միջուկի մասսայական փտմամբ և փչակավոր ծառերի նկատելի ավելացմամբ։ Հաշվի առնելով այս բոլորը և ելնելով ըստ տրամագծի ծառաբների բաշխվածության բնույթից, առաջին սերնդին վերագրվում են 220 (XI հասակային դասի) և ավելի տարիք ունեցող հաճարենիները, որոնք կազմում են առաջին հարկի ծառուտների գերհասունացած մասը։ Հետևաբար, այս սերնդի սկզբնական (220) տարիքն իսկ կարելի է համարել տարահասակ հաճարկուտների բնական հասունության սկիզբն ու անտառահատման նպատակներով առաջին հասակային դասը։ Երկրորդ սերնդին վերագրվում են VIII—XI (141—220 տարեկան) և երրորդին՝ IV—VII (61—140 տարեկան) դասի հաճարենու ծառուտները։ Իսկ I, II և III հասակային դասի ծառերը, որոնք չեն մտնում երկրորդ հարկի կազմի մեջ, պետք է վերագրել երիտասարդ սերնդին։ Ըստ ուսումնասիրության տվյալ-

ների, հանրապետությունում հաճարկուտների գերիշխող մասը կազմում են երրորդ սերնդի IV—VII հասակային դասի ծառուտները։ Այն կարծիքը, թե Հայաստանում հաճարենու անտառները համատարած գերհասունացած են, բնականաբար ոչնչանում են և ենթակա են անհապաղ հատման, անհիմն է։

Հաճարենու անտառների տարահասակությունը, համարելով այդ ծառատեսակի կենսաբանական առանձնահատկության [4] և տնտեսության անցյալ պատմության հետևանք, խոսում է նրանցում կոմպլեքսային-ընտրական հատումներ կատարելու նպատակահարմարության մասին, որն ավելի է համապատասխանում հաճարենուտների յուրօրինակ կառուցվածքին ու նրանց բնական վերականգնման ընթացքին [2]։ Միմիայն, այն պետք է կիրառել, հիմնականում, լեռնային անտառների հողապաշտպան և ջրապահպան ֆունկցիաների բարձրացման նպատակով։

ՀՍՍՀ ԳԱ բուսաբանական ինստիտուտ

Ստացված է 2. II 1970 թ.

Р. А. ГРИГОРЯН

ВОЗРАСТНАЯ СТРУКТУРА БУКОВЫХ ДРЕВОСТОЕВ АРМЕНИИ

Леса в Армянской ССР в основном состоят из бука (32%), дуба (35%) и граба (18%). Остальная площадь занята грабинником, можжевельником, сосной, ясенем, кленом, ильмом, липой и прочими породами. Возрастная структура этих древостоев почти не изучена. Между тем изучение данного вопроса имеет большое значение как для естественного возобновления леса, так и для выбора способа рубок и определения размера лесопользования.

Исследования показывают, что букняки Армянского нагорья отличаются исключительной разновозрастностью (от одного года до 400 лет), а также диаметром ствола (от нескольких сантиметров до 1,5 м). Подобная возрастная структура вызывает необходимость расчленения их на три однородные по возрасту поколения, что обосновывается биологическими особенностями поколений, характером распределения стволов бука по возрасту, состоянием отдельных деревьев и их диаметром. К первому поколению относятся перестойные деревья бука—старше XI класса возраста; ко второму—спелая часть древостоя—с VIII по XI; и к третьему—приспевающие—с IV по VII класс возраста. Деревья I, II и III класса возраста следует относить к молодому поколению. Большинство букняков республики можно отнести к третьему поколению. Мнение о сплошной перестойности буковых лесов Армении, подлежащих немедленной рубке из-за неминуемой естественной гибели, следует считать ошибочным.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Анучин Н. П.* Лесоустройство. М., 1962.
2. *Григорян Р. А.* Биологический журнал Армении, т. XXI, 3, 1968.
3. *Махатадзе Л. Б.* Изв. АН АрмССР, т. IV, I, 1951.
4. *Науменко И. М.* Труды ин-та леса АН ГрузССР, т. VI, 1956.
5. *Семечкин И. В.* Особенности таксации древостоев в связи с типами возрастной структуры. М., 1963.
6. *Хуршудян П. А., Цатурян Г. М.* Изв. ВУЗ, Лесной журнал, 3, 1968.
7. *Ярошенко Г. Д.* Методика точного определения возраста деревьев бука. Ереван—Караклиса, Госиздат НКЗ ССРА, 1933.
8. *Ярошенко Г. Д.* Изв. АН АрмССР, т. I, 6, 1949.
9. *Ярошенко Г. Д.* Буковые леса Армении. Ереван, Изд. АН АрмССР, 1962.